ՍՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Գ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՍՄԿԿ յուրաքանչյուր համագումար կարևոր ուղենիշ է կուսակցության ու ժողովրդի կյանքում, մի նոր աստիճան մեր երկրի առաջընթացի ճանապարհին։ Կուսակցության համագումարների շարքում իր առանձնահատուկ, անկրկնելի տեղը կգրավի ՍՄԿԿ XXV համագումարը։

Համագումարը տեղի ունեցավ 1976 թ. փետրվարի 24-ից մարտի 5-ը։ Այն լսեց ու քննարկեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի զեկուցումը՝ ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, որով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Գ. Ֆ. Սիզովը, ինչպես նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինի զեկուցման հիման վրա հաստատեց Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները։ Համագումարն ընդունեց «Ազատություն իմպերիալիզմի և ռեակցիայի կալանավորներին» հայտարարությունը և ընտրեց կուսակցության ղեկավար մարմիններ։

XXV համագումարի ողջ աշխատանքը ներթափանցված էր լենինյան ոճով։ Համագումարի որոշումներում և փաստաթղթերում գիտական հիմքի վրա, համակողմանիորեն հիմնավորված է կուսակցության գործունեության ծրագիրը առաջիկա տարիներին։ Հիրավի, ծրագրային փաստաթղթի նշանակություն ունի Կենտկոմի հաշվետվությունը։ Մարքսիստական-լենինյան տեսությունը հարստացավ նոր դրույթներով ու եզրակացություններով։ Զեկուցման մեջ հանգամանորեն սահմանված է մեր հասարակարգի քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացման ստրատեգիան, առաջ է քաշված խաղաղության և միջազգային համագործակցության, ժողովուրդների անկախության և ազատության համար պայքարի ծրագիր։

Համագումարը ամբողջովին ու լիովին հավանություն տվեց կուսակցության Կենտրոնական կոմիտեի քաղաքական գծին ու պրակտիկ գործունեությանը, հաշվետու զեկուցմանը և բոլոր կուսակցական կազմակերպություններին առաջարկեց իրենց աշխատանքում ղեկավարվել զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևի առաջ քաշած դրույթներով ու խնդիրներով։

Ե՛վ Կենտկոմի հաշվետվության մեջ, և՛ համագումարի մյուս նյութերում վերլուծվում են ՍՍՀՄ միջազգային դրության և կուսակցության արտաքին-քաղաքական գործունեության հարցերը։

Հաշվետու ժամանակաշրջանում մեր կուսակցությունը, նրա Կենտկոմը, քաղբյուրոն արտաքին-քաղաքական գործունեության մեջ առաջին հերթին մեծ ուշադրություն են նվիրել սոցիալիստական պետությունների հետ ունեցած փոխհարաբերություններին, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի զար-

գացման, սոցիալիստական երկրների համագործակցության և եղբայրական բարեկամության հետագա ամրապնդման հարցերին։ Ընդհանրացնելով սոցիալիզմի աշխարհի պատմական նվաճումները, համագումարն ընդգծեց, որ տարեցտարի ամրապնդվում են սոցիալիզմի դիրքերը, ուժեղանում ու խորանում է սոցիալիստական երկրների ազդեցությունը համաշխարհային իրադարձությունների ընթացքի վրա։ Ի՞նչն է բնորոշ սոցիալիստական երկրներին. «Ցուրաքանչյուր սոցիալիստական ազգի ծաղկման, սոցիալիստական պետությունների սուվերենության ամրապնդման հետ մեկտեղ,— նշում է Լ. Ի. Բրեժնևը,— ավելի ու ավելի են սերտանում նրանց փոխադարձ կապերը, ավելի ու ավելի շատ ընդհանրության տարրեր են երևան գալիս նրանց քաղաքականության մեջ, էկոնոմիկայում, սոցիալական կյանքում, տեղի է ունենում զարգացման մակարդակների աստիճանական հավասարում։ Սոցիալիզմի երկրների աստիճանական մերձեցման այդ պրոցեսը այժմ միանգամայն որոշակիորեն դրսևորվում է որպես օրինաչափություն»[1]։

Համերաշխության, փոխադարձ աջակցության շնորհիվ սոցիալիստական երկրներին հաջողվել է անցած հնգամյակում լուծել մի շարք խոշորագույն խնդիրներ. պատմական հաղթանակ տարավ Վիետնամի ժողովուրդը։ Վիետնամից հետո ազատություն նվաճեցին Լաոսն ու Կամբոջան։ Համընդհանուր ճանաչում ստացավ ԳԴՀ սուվերենությունը, նա դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ, միջազգային մասշտաբով հաստատվեցին ԳԴՀ-ի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի արևմտյան սահմանները։ Սոցիալիզմը ամուր կերպով հաստատվել է Կուբայի հողում։

ՍՄԿԿ XXIV համագումարից հետո անցած տարիներին ամրապնդվել ու ընդլայնվել է սոցիալիստական երկրների տնտեսական և գաղափարական համագործակցությունը։ Ահա մի քանի փաստեր։ Հինգ տարում սոցիալիստական համագործակցության երկրների ինդուստրիան չորս անգամ ավելի արագ է աճել, քան զարգացած կապիտալիստական պետությունների արդյունաբերությունը։ 1975 թ. նրանք ավելի քան երկու անգամ շատ արդյունաբերական արտադրանք թողարկեցին, քան «ընդհանուր շուկայի» երկրները։ Հետևողականորեն իրագործվում է սոցիալիստական տնտեսական ինտեգրացման երկարաժամկետ ծրագիրը, որը մշակվել է 1971 թ.։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը հակաիմպերիալիստական ճակատի վճռական ուժն է։ Սոցիալիզմը հսկայական ներգործություն է ունենում աշխարհի հարյուր միլիոնավոր մարդկանց մտքերի և զգացմունքների վրա։ Նա աշխատավոր մարդկանց համար ապահովում է ազատություն, դեմոկրատական իրավունքներ, բարեկեցություն, գիտելիքներին տիրապետելու ամենալայն հնարավորություն, հենարան է ծառայում իրենց ազատության և անկախության համար պայքարող ժողովուրդներին։ «Իսկ վաղվա օրը, անտարակույս, կբերի սոցիալիզմի անսահման հնարավորությունների, կապիտալիզմի հանդեպ նրա պատմական գերազանցության նոր վկայություններ։ Մյուս եղբայրական կուսակցությունների հետ մեկտեղ ՍՄԿԿ-ն այսուհետև ևս ամեն

---

1 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում («Սովետական Հայաստան», 25. II. 1976)։

ինչ կանի, որպեսզի հաղթանակած սոցիալիզմի օրինակը ավելի ու ավելի պայծառորեն շողա»[2]։

Իսկ ինչպիսի՞ն է դրությունը կապիտալի աշխարհում։ Կուսակցության XXIV համագումարը նշել էր, որ նոր պայմաններին հարմարվելը ամենևին չի նշանակում կապիտալիզմի կայունացում։ Ընդհակառակը, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը շարունակում է խորանալ։ Որո՞նք են կապիտալիզմի զարգացման առանձնահատկություններն ու բնորոշ կողմերը մեր օրերում։ Առաջին հերթին այն, որ կապիտալի աշխարհում բռնկեց տնտեսական ճգնաժամ, որն իր սրությամբ ու խորությամբ կարող է համեմատվել միայն 30-ական թվականների սկզբի ճգնաժամի հետ։ Ճգնաժամը տարածվեց համաշխարհային կապիտալիստական տնտեսության բոլոր հիմնական կենտրոնների վրա։ կազմալուծեց հետպատերազմյան ժամանակաշրջանի պետական-մոնոպոլիստական էկոնոմիկան, զարգացած կապիտալիստական երկրներում 15 միլիոնից ավելի աշխատավորներ դուրս շպրտվեցին գործարաններից ու հիմնարկներից, միլիոնավոր մարդիկ ստիպված են աշխատել ոչ լրիվ օր կամ շաբաթական 2—3 օր։ Կապիտալիստական երկրների մեծ մասում արտադրության կրճատումը, գործազրկության աճը միահյուսվեցին վալյուտային, էներգետիկ, հումքային ճգնաժամերի և ինֆլյացիայի հետ։ Տարաձայնությունները դրսևորվում են նոր ձևերով, հակասությունները բռնկում են նոր ուժով։ Այս ամենը վկայում է, որ «ներկայիս ճգնաժամը արտասովոր է։ Հիմա ամենքը տեսնում են. հերքված է ռեֆորմիստների և բուրժուական գաղափարախոսների հորինած գլխավոր առասպելներից մեկը՝ այն առասպելը, թե իբր մեր օրերի կապիտալիզմը ընդունակ է ազատվելու ճգնաժամերից։ Կապիտալիզմի անկայունությունն ավելի ու ավելի ակներև է դառնում։ Կապիտալիզմը «առողջացնելու» և նրա շրջանակներում «համընդհանուր բարգավաճության հասարակարգ» ստեղծելու խոստումները ակնհայտ ձախողում կրեցին... Կապիտալիզմը ապագայից դուրկ հասարակարգ է»[3]։

Համագումարն ընդգծեց, որ պետական-մոնոպոլիստական զարգացումը ավելի է խորացնում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, սրում նրա հակասությունները, ուժեղացնում հակաիմպերիալիստական պայքարը։ Այդ պայքարի առաջին շարքերում կանգնած է միջազգային բանվոր դասակարգը։ Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ բանվոր դասակարգը ուժեղացնում է պայքարի խոշոր կապիտալի դեմ։ Փաստերը վկայում են, որ վերջին տասնամյակներում գործադուլային պայքարը հասել է ամենաբարձր մակարդակի։ Բնորոշն այն է, որ բանվորական շարժմանը մասնակցում են բնակչության ամենատարբեր խավերը և, որ գլխավորն է, աճել է բանվոր դասակարգի հեղինակությունը, բարձրացել նրա դերը՝ որպես աշխատավորների մարտական պայքարի ավանգարդի։ Վերլուծելով համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման տենդենցները, մեր կուսակցության համաժողովը եզրակացնում է, որ «ռեալ սպառնալիք է ծագում մոնոպոլիստական կապիտալի և նրա քաղաքական դրածոների տիրապետության համար»[4]։

---

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Հակաիմպերիալիստական մյուս ուժը ազգային-ազատագրական պայքարն է։ 70-ական թվականների առաջին կեսին Աֆրիկայում ծավալվեց գաղութային սիստեմի կործանման եզրափակիչ փուլը։ Անկախություն ձեռք բերեցին Գվինեա-Բիսաուն, Կանաչ Հրվանդանի կղզիները, Մոզամբիկը և Անգոլան։ Ազատագրված շատ երկրներում, առաջին հերթին սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրների էկոնոմիկայում և քաղաքական կյանքում կատարվել են առաջադիմական խոր վերափոխություններ և լուրջ տեղաշարժեր. արդյունաբերության մեջ ծանրության կենտրոնը փոխադրվում է պետական սեկտոր, վերացվում է ֆեոդալական հողատիրությունը, ազգայնացվում են օտարերկրյա ձեռնարկությունները, տեղի է ունենում դասակարգային ուժերի սահմանազատման բարդ պրոցես, բարձրանում է այդ երկրների դերը համաշխարհային զարգացման մեջ։

Համագումարը վերստին ընդգծեց, որ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի հաջողության գրավականը սոցիալիզմի համաշխարհային սիստեմի, բանվորական շարժման և ազգային-ազատագրական պայքարի գործողությունների միաբռնությունն է, նրանց դաշինքի ամրապնդումը։ Լենինյան կուսակցությունը, հավատարիմ պրոլետարական ինտերնացիոնալիզմի ավանդույթներին, համագումարի բարձր ամբիոնից հայտարարեց, որ այսուհետև էլ կամրապնդի կապերը միջազգային պրոլետարիատի հետ, կաջակցի իրենց ազատության համար պայքարող ժողովուրդներին։ Ընդ որում «Սովետական Միությունը չի փնտրում որևէ օգուտ իր համար, չի ընկնում կոնցեսիաների ետևից, չի ձգտում հասնել քաղաքական տիրապետության, ձեռք բերել ռազմական բազաներ։ Մենք վարվում ենք այնպես, ինչպես մեզ թելադրում են մեր հեղափոխական խիղճը, մեր կոմունիստական համոզմունքները»[5]։

Մեր ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական ուժը համաշխարհային կոմունիստական շարժումն է։ Անցած հնգամյակի նշանակալի երևույթներից մեկը կապիտալիստական աշխարհում կոմունիստական կուսակցությունների ազդեցության աճն էր։ Բավական է նշել, որ 5 տարում կոմունիստների թիվն ավելացել է գրեթե մեկ միլիոնով, այդ թվում Արևմտյան Եվրոպայում՝ մոտ 400 հազարով։ Ուրախալի է նշել, որ զգալիորեն աճել է այն ընտրողների թիվը, ովքեր քվեարկում են կոմունիստների օգտին։

Համագումարում և կուսակցական կազմակերպություններում ունեցած իրենց ելույթներում եղբայրական կուսակցությունների ներկայացուցիչները պատմեցին աշխարհի տարբեր մասերում կոմունիստական և բանվորական շարժման ձեռք բերած նվաճումների մասին։ Նշվեց, որ կոմունիստները իրենց պայքարում ելնում են հեղափոխության, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ընդհանուր օրինաչափություններից, իրենց հարաբերություններում ղեկավարվում են յուրաքանչյուր կուսակցության իրավահավասարության և ինքնուրույնության հարգման սկզբունքով։ Ծագող պրոբլեմները կարելի է և պետք է քննարկել ու լուծել ինտերնացիոնալիզմի դիրքերից, ընկերականության ոգով։

Միաժամանակ հարկ է նշել, որ կոմունիստական շարժման մեջ դեռևս գոյություն ունեն դժվարություններ, որոնք պայմանավորված են աջ ու «ձախ» ռևիզիոնիզմի աշխուժացմամբ, մաոականների պառակտիչ գործողություններ-

5 Նույն տեղում։

ռով։ Դեռևս նկատվում են շեղումներ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքից։ Համագումարը նորից մատնանշեց, որ աջ և «ձախ» ռևիզիոնիզմի, կոմունիստական շարժման մարքս-լենինյան հիմքերը խեղաթյուրելու կամ խարխլելու փորձերի դեմ մղվող պայքարը բոլոր կոմունիստների ընդհանուր խնդիրն է։ Անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ինտերնացիոնալ միասնությունը, պայքարել նրանց դեմ, ովքեր իրենց քաղաքականությամբ ու գործերով չլատում են այդ միասնությունը։ Այս տեսակետից կարևոր նշանակություն կարող է ունենալ միջազգային նոր խորհրդակցության հրավիրումը, որի օգտին հանդես են գալիս մի շարք կուսակցություններ։ Մեր կուսակցությունը նույնպես պաշտպանում է այդ առաջարկությունը։

Սովետական Միությունը իրագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի առաջադրած խաղաղության ծրագիրը, հասել է նշանակալի հաջողությունների, որոնք համընդհանուր ճանաչում են գտել։ Գլխավոր արդյունքն այն է, որ շրջադարձ է կատարվել «սառը պատերազմից» դեպի լարվածության թուլացում։ Հանրագումարի բերելով ՍՄԿԿ արտաքին-քաղաքական գործունեության արդյունքները, Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Չորրորդ տասնամյակն է, ինչ մենք ապրում ենք խաղաղության պայմաններում։ Սոցիալիզմի դիրքերն ամրապնդվել են։ Լարվածության թուլացումը դարձել է առաջատար միտում։ Ահա կուսակցության միջազգային քաղաքականության գլխավոր արդյունքը։ Այդ արդյունքով սովետական մարդիկ կարող են հպարտանալ»[6]։

Ելնելով խաղաղությունն ամրապնդելու շահերից ՍՄԿԿ XXV համագումարը առաջադրեց խաղաղության և միջազգային համագործակցության, ժողովուրդների ազատության և անկախության հետագա պայքարի ծրագիր։

ՍՄԿԿ XXV համագումարը բազմակողմանիորեն քննարկեց տնտեսական քաղաքականության հիմնական պրոբլեմները, որոշեց կուսակցության տնտեսական ստրատեգիան արդի ժամանակաշրջանում։ Սկզբունքային դիրքերից վերլուծվեցին 9-րդ հնգամյակի արդյունքները, նշվեցին տնտեսական շինարարության հաջողությունները, ինչպես նաև այն թերությունները, դժվարությունները, չլուծված պրոբլեմները, որոնք դեռ կան և պետք է հաղթահարվեն։ Անդրադառնալով ավարտված հնգամյակի արդյունքներին, համագումարը նշեց, որ հնգամյակում նոր խոշոր առաջընթաց քայլ արվեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, երկրի անվտանգության ապահովման ուղղությամբ։

Վ. Ի. Լենինը մեր կուսակցությունը համարել է ապագայի կուսակցություն, նորարարների կուսակցություն։ Դրա վառ վկայությունն են Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները։ Դա մի կարևոր, խորապես գիտական փաստաթուղթ է, որը որոշում է կուսակցության տնտեսական քաղաքականության սկզբունքային դրույթները 10-րդ հնգամյակում։

Այդ հնգամյակը նոր փուլ է կուսակցության տնտեսական ստրատեգիայի կենսագործման ուղղությամբ։ Այդ ստրատեգիայի գերագույն նպատակը եղել ու մնում է ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը։ Իսկ որո՞նք են այդ խնդրի կենսագործման ուղիներն ու

---

6 Նույն տեղում։

միջոցները։ Համագումարը մատնանշում է դրանք. հանրային արտադրության դինամիկ և համամասնական զարգացումը, նրա արդյունավետության բարձրացումը, գիտատեխնիկական առաջադիմության արագացումը, աշխատանքի արտադրողականության աճը, ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում արտադրանքի որակի համակողմանի բարելավումը։ Հենց այս ամենից էլ դումարվում է հնգամյակի գլխավոր խնդիրը, ինչպես այն ձևակերպված է Կենտկոմի փաստաթղթում։ Կուսակցության տնտեսական ստրատեգիայի առանցքը երկրի հզորության հետագա մեծացումն է, արտադրական ֆոնդերի ընդլայնումն ու արմատական նորացումը, ծանր արդյունաբերության կայուն, հաշվեկշռված աճի ապահովումը։

Մեր էկոնոմիկայի աճի մասշտաբների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար բավական է բերել հետևյալ տվյալները։ Հնգամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքը կմեծանա 35—39%-ով, այդ թվում արտադրության միջոցներինը՝ 38—42%-ով, սպառման առարկաներինը՝ 30—32%-ով։ Հնգամյակի վերջում կարտադրվի 1340—1380 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 620—640 միլիոն տոննա նավթ, 400—435 միլիարդ խորանարդ մետր գազ, 790—810 միլիոն տոննա ածուխ, 160—170 միլիոն տոննա պողպատ։

Նշելով հնգամյակի գլխավոր խնդրի պահանջներից, պետք է իրականացվեն ժողովրդի բարեկեցության հետագա բարձրացման լայն ծրագիր, սովետական մարդկանց աշխատանքի ու կենցաղի պայմանների բարելավման, առողջապահության, կրթության, կուլտուրայի զգալի առաջադիմության խոշոր միջոցառումներ, որոնք կնպաստեն նոր մարդու ձևավորմանը, սոցիալիստական ապրելակերպի զարգացմանը։

Արդի փուլում մեր էկոնոմիկայի հանգուցային պրոբլեմներից մեկը գյուղատնտեսության հետագա զարգացումն է։ Դա կուսակցությունը դիտում է որպես համապետական, համաժողովրդական գործ։ Հնգամյակում գյուղատնտեսության համար կծախսվի 172 միլիարդ ռուբլի, որը 41 միլիարդով ավելի է նախորդ հնգամյակից։ Գյուղատնտեսությունը կստանա 467 միլիոն տոննա պարարտանյութ, 1,5 անգամ կավելանա տեխնիկայի մատակարարումը գյուղին։ Գյուղատնտեսական արտադրանքի տարեկան միջին ծավալը կավելանա 14—17%-ով։ 1980 թ. կարտադրվի 215—220 միլիոն տոննա հացահատիկ, ավելի քան 15 միլիոն տոննա միս, 9 միլիոն տոննա բամբակ և այլն։ «Ներկայումս,— համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման համեմատ ամբողջ հասակով մեկ կանգնում են նրա արդյունավետությունը բարձրացնելու ու որակական բոլոր ցուցանիշները բարելավելու խնդիրները»[7]։

Ինչպես և նախորդ հնգամյակները, 10-րդ հնգամյակը նախատեսում է ՍՍՀՄ բոլոր հանրապետությունների էկոնոմիկայի և կուլտուրայի հարմոնիկ զարգացման լայն ծրագիր։ Դա կարելի է ցույց տալ Սովետական Հայաստանի օրինակով։ Սովետական Միության ժողովուրդների ընտանիքում, նրանց եղբայրական օգնությամբ, հանրապետությունը նոր բնագծեր է նվաճել 9-րդ հնգամյակում։ Ինչպես նշվեց ՀԿԿ XXVI համագումարում, հանրապետության արդյունաբերական արտադրության ծավալի բացարձակ աճը 9-րդ հնգամյա-

[7] Նույն տեղում։

կում ամենաբարձրն է, որի հավասարը մենք չենք ունեցել որևէ այլ հնգամյակում։ Ինչպես հայտնի է, անցյալ տարի ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը ընդունեցին որոշում՝ «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին»։ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հերթական խնդիրները որոշելիս հիմք է ընդունվել այդ որոշումը։ Տնտեսական ի՞նչ պրոբլեմներ պետք է լուծվեն Սովետական Հայաստանում առաջիկա տարիներին։ Արդյունաբերական արտադրությունը կաճի 43—47%-ով, գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը՝ 22—25%-ով։ Հնգամյակի վերջում հանրապետությունում կարտադրվի 15 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։ Աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման նպատակով նախատեսվում է արդյունաբերական ձեռնարկությունները տեղաբաշխել փոքր քաղաքներում ու շրջաններում։ Ըստ որում՝ մեծ զարգացում կստանան արդյունաբերության աշխատատար ճյուղերը։

ՍՄԿԿ XXV համագումարի փաստաթղթերում և նյութերում շարադրված է կուսակցության աշխատանքի ծրագիրը պետական և հասարակական կազմակերպությունների կուսակցական ղեկավարման կատարելագործման, սովետական հասարակության քաղաքական սիստեմի համակողմանի զարգացման ուղղությամբ։ Խոսքը վերաբերում է այնպիսի կարևոր հարցերի, ինչպես սոցիալիստական պետականության և օրենսդրության կատարելագործումը, սոցիալիստական իրավակարգի ամրապնդումը, կոմունիստական շինարարության մեջ արհմիությունների, կոմերիտմիության և աշխատավորների մյուս հասարակական կազմակերպությունների դերի բարձրացումը և նրանց գործունեության ակտիվացումը։ Քննարկելով այդ հարցերը և որոշելով գալիք անելիքները, համագումարը մեծ ուշադրություն նվիրեց սովետների դերի հետագա բարձրացման հարցերին։ Համագումարը գոհունակությամբ նշեց, որ ՍՄԿԿ Կենտկոմը պատշաճ ուշադրություն է նվիրել և այսուհետև էլ կնվիրի մեր երկրի պաշտպանունակության ամրապնդմանը և զինված ուժերի կատարելագործմանը։ Մեր հասարակության քաղաքական սիստեմի զարգացման գլխավոր արդյունքները կընդհանրացվեն ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ, որի նախագիծը մշակվում է։

Կատարելագործելով սովետական հասարակության քաղաքական սիստեմը, կուսակցությունը ելել և ելնում է այն բանից, որ մեր երկրում կառուցված է զարգացած սոցիալիստական հասարակարգ, որը աստիճանաբար վերաճում է կոմունիստականի, մեր պետությունը համաժողովրդական պետություն է, մեզ մոտ ստեղծվել է պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը, իսկ այդ ընդհանրության հիմքում ընկած է բանվոր դասակարգի, գյուղացիության, մտավորականության անխախտ դաշինքը, բոլոր ազգերի ու ազգությունների բարեկամությունը։

ՍՄԿԿ XXIV համագումարից հետո անցած հինգ տարիները կոմունիստական կուսակցության հետագա զարգացման ու ամրապնդման տարիներ էին։ Մեր բոլոր հաջողությունները և՛ կոմունիզմի կառուցման բնագավառում, և՛ միջազգային ասպարեզում կապված են կուսակցության անվան, նրա մարտունակության բարձրացման, ղեկավար դերի աճի հետ։ Այդ է պատճառը, որ համագումարի փաստաթղթերում իրավացիորեն առանձնահատուկ տեղ են

գրավում կուսակցական շինարարության, զարգացած սոցիալիզմի պայմաններում կուսակցության առաջընթացի օրինաչափությունների հարցերը։ Համագումարը ընդգծեց, որ կուսակցությունը ըստ արժանվույն է կատարում բանվոր դասակարգի, ամբողջ ժողովրդի քաղաքական առաջնորդի դերը։

Կուսակցությունը իր հերթական համաժողով եկավ ավելի համախմբված, քաղաքական և կազմակերպական աշխատանքի փորձով իմաստնացած։ Այժմ նրա շարքերում հաշվվում է 15 միլիոն 694 հազար կոմունիստ։ Հետևողականորեն կատարելով XXIV համագումարի ցուցումը, կուսակցական կազմակերպությունները շարունակել են կուսակցության սոցիալական կազմի հետագա բարելավման գործը։ XXIV համագումարից հետո կուսակցության շարքերն է ընդունվել 2,6 միլիոն մարդ, այդ թվում Հայաստանում՝ ավելի քան 15 հազար[8]։ Ընդունվածների 58%-ը բանվորներ են։ Խոշոր արդյունաբերական կենտրոններում այդ տոկոսը ավելի բարձր է։ Օրինակ, Գորկու մարզում նոր ընդունվածների մեջ բանվորները կազմում են 63, իսկ Գորկու ավտոմոբիլային գործարանում՝ 75%[9]։ ՀԿԿ Լենինականի քաղաքային կազմակերպության կոնֆերանսը նշեց, որ կուսակցության մեջ ընդունվածների երկու երրորդից ավելին բանվորներ են[10]։ Վերջին հինգ տարում Երևանում կուսակցության մեջ ընդունված բանվորների թիվն ավելացել է 8,7%-ով[11]։ Սա օրինաչափ երևույթ է, որն արտացոլում է բանվոր դասակարգի առաջատար դերը հասարակության կյանքում։

«Զարգացած սոցիալիզմի պայմաններում,— նշված է Կենտկոմի հաշվետվության մեջ,— երբ կոմունիստական կուսակցությունը դարձել է ամբողջ ժողովրդի կուսակցությունը, նա բնավ չի կորցնում իր դասակարգային բնույթը։ Իր էությամբ ՍՄԿԿ-ն եղել է և մնում է բանվոր դասակարգի կուսակցությունը»[12]։

Դեռևս մեր կուսակցության II համագումարում Վ. Ի. Լենինը նշել է. «Մենք պետք է աշխատենք կուսակցության անդամի կոչումն ու նշանակությունն ավելի բարձրացնել»[13]։ Այս տեսակետից կարևոր դեր խաղաց կուսակցական փաստաթղթերի փոխանակումը, որն անցկացվեց XXIV համագումարի որոշմամբ։ Դա նպաստեց կոմունիստների աշխատանքային և հասարակական-քաղաքական ակտիվության զգալի աճին։ Փաստաթղթերի փոխանակման ժամանակ բարձրացավ կոմունիստների փոխադարձ պահանջկոտությունը։ Փաստաթղթերի փոխանակումը կազմակերպված, պատշաճ մակարդակով անցավ նաև Հայաստանի կուսակցական կազմակերպություններում։ Շուրջ 130 հազար կոմունիստներ ստացան նոր նմուշի տոմսեր[14]։

Կուսակցության զարգացման կարևոր պայմաններից մեկը կուսակցական կյանքի լենինյան նորմերի ու սկզբունքների և ամենից առաջ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի անշեղ կիրառումն է։ Ինչպես ցույց տվեց XXV հա-

---

8 «Սովետական Հայաստան», 21. I. 1976։

9 «Правда», 11.II.1976.

10 «Սովետական Հայաստան», 13. XII. 1975։

11 «Երեկոյան Երևան», 10. I. 1976։

12 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը... («Սովետական Հայաստան», 25. II. 1976)։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 642։

14 «Սովետական Հայաստան», 21. I. 1976։

մագումարի աշխատանքը, հաշվետու շրջանում շատ բան է արվել ներկուսակցական դեմոկրատիայի, կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի հետագա խորացման, կուսակցության գործունեության մեթոդների և կազմակերպական ձևերի զարգացման ուղղությամբ։ Դա առանձնակի ուժով դրսևորվեց համագումարի նախօրյակին անցկացված հաշվետու-ընտրական կամպանիայի ժամանակ։ Բավական է ասել, որ սկզբնական կուսկազմակերպությունների հաշվետու ընտրական ժողովներին մասնակցել է կոմունիստների ավելի քան 94%-ը, Հայաստանում՝ 95, Էստոնիայում՝ 96%-ը[15]։

Կոլեկտիվ աշխատանքի լավ օրինակ է տալիս կուսակցության Կենտկոմը։ Հաշվետու ժամանակաշրջանում մեծ լարվածությամբ էին աշխատում կուսակցության կոլեգիալ մարմինները՝ Կենտկոմը, Կենտկոմի քաղբյուրոն և քարտուղարությունը։ Այդ ժամանակաշրջանում տեղի է ունեցել Կենտկոմի 11 պլենում, քաղբյուրոյի 215 և քարտուղարության 205 նիստ[16]։ Դրանցում լուծվել են կուսակցության և երկրի կյանքի կարևորագույն հարցերը։

XXV համագումարը ամենայն սրությամբ դրեց կուսակցության կադրային քաղաքականության հարցերը։ Վերջին տարիներս շատ բան է արվել կադրերի ընտրության, տեղաբաշխման և դաստիարակության գործը էլ ավելի բարելավելու ուղղությամբ։ Կուսակցական աշխատանքի են առաջ քաշվել ժողովրդական տնտեսության մասնագետներ։

Կուսակցությունն այժմ ավելի բարձր պահանջներ է ներկայացնում ղեկավար կադրերին։ Ժամանակակից ղեկավարը պետք է կուսակցականությունը օրգանապես զուգորդի բանիմացության հետ, կարգապահությունը՝ նախաձեռնության և ստեղծագործական մոտեցման հետ։ Ղեկավարը պարտավոր է հաշվի առնել նաև սոցիալ-քաղաքական, դաստիարակչական կողմերը, զգայուն լինի մարդկանց նկատմամբ, օրինակ ծառայի աշխատանքում և կենցաղում։ «Չի կարող կուսակցական ղեկավար լինել նա, ով կորցնում է իր գործունեությունը քննադատաբար գնահատելու ընդունակությունը, կտրվել է կյանքից, բազմացնում է շողոքորթներ ու քծնողներ, ով կորցրել է կոմունիստների վստահությունը»[17]։

Համագումարի որոշումներում և փաստաթղթերում հանգամանորեն լուսաբանվել են նոր մարդու ձևավորման, գաղափարական-քաղաքական աշխատանքի, կոմունիստական դաստիարակության հարցերը։ Կոմունիստական դաստիարակությունը տեղի է ունենում մարքսիստական-լենինյան տեսության ամուր հիմքի վրա։

XXIV համագումարից հետո կուսակցությունը շատ բան է արել մարքս-լենինյան տեսության հրատապ պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Այդ գործում էական ներդրում ունեն գիտնականները, հատկապես հասարակական գիտությունների ներկայացուցիչները։ Կուսակցական փաստաթղթերում և գիտական աշխատություններում ընդհանրացվել է նոր հասարակարգի կառուցման և ՍՄԿԿ համաշխարհային փորձը, տրվել է միջազգային զարգացման նորագույն պրոբլեմների վերլուծությունը, մշակվել են սոցիալական ու քաղաքական հրատապ պրոբլեմներ։ ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման և

---

15 «Правда», 16. I. 1976.

16 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը... («Սովետական Հայաստան», 25. II. 1976)։

17 Նույն տեղում։

Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման վերաբերյալ փաստաթղթում որոշված են հասարակական գիտությունների զարգացման կարևորագույն ուղղությունները։ Համագումարի որոշումները հասարակական գիտությունների ներկայացուցիչների համար տեսական լուրջ ուսումնասիրություններ կատարելու բարենպաստ պայմաններ են ստեղծում։ Նրանք միշտ պետք է հիշեն համագումարի այն ցուցումը, որ գիտության հարցերը կարող են լուծվել կյանքի հետ նրա ունեցած ամենաամուր կապի պայմանով միայն։

Ընդհանրացնելով կուսակցության գաղափարական աշխատանքի վերջին տարիների փորձը, համագումարը որոշեց այդ բնագավառի գլխավոր ուղղությունները, պահանջելով այսուհետև ևս ժամանակին հակահարված տալ թշնամական գաղափարական գիվերսիաներին, լայնորեն տարածել սոցիալիզմի գաղափարները, հատուկ ուշադրություն դարձնել քաղաքական լուսավորության աշխատանքի բովանդակությանը, նրա տեսական մակարդակի բարձրացմանը։ Գաղափարական աշխատանքում կարևոր տեղ են գրավելու աշխատավորների հայրենասիրական, ինտերնացիոնալ, աշխատանքային և բարոյական դաստիարակության հարցերը, որոնց լուծմանը պետք է նպատակամղեն իրենց աշխատանքը կուսակցական կազմակերպությունները, մասսայական ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցները, մեր գրականությունն ու արվեստը։

ՍՄԿԿ XXV համագումարը կարևոր իրադարձություն է ոչ միայն մեր կուսակցության, այլև միջազգային կոմունիստական շարժման համար։ Դա հիրավի համաշխարհային պատմական նշանակություն ունեցող երևույթ է։ Համագումարի աշխատանքին մասնակցեցին 96 երկրների կոմունիստական, բանվորական, ազգային-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունների 103 պատվիրակություններ։ Համագումարում ունեցած իրենց ելույթներում եղբայրական կուսակցությունների ներկայացուցիչներն ընդգծեցին մեր համագումարի միջազգային նշանակությունը։ «ՍՄԿԿ համագումարները՝ սկսած Լենինի ժամանակներից մինչև այսօր,— համագումարում հայտարարեց Ֆիդել Կաստրոն,— ներկայացնում են փորձի բազմահարուստ աղբյուր, որից սովորում են աշխարհի բոլոր հեղափոխականները»[18]։ Եղբայրական կուսակցությունների ներկայացուցիչները միահամուռ կերպով ընդգծեցին, որ համագումարի որոշումները հսկայական ազդեցություն կունենան համաշխարհային զարգացման ընթացքի վրա։ «Նոր սովետական հնգամյակը,— ասաց Ուրուգվայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Ռոդնեյ Արիսմենդին,— պետք է դիտել որպես ավանդ գաղութատիրության և նեոգաղութատիրության նկատմամբ վերջնական հաղթանակի ապահովման գործում և որպես խթան դեմոկրատիայի ու սոցիալիզմի նոր հաջողությունների համար»[19]։

ՍՄԿԿ XXV համագումարը մշակեց ստեղծագործ աշխատանքի հոյակապ ծրագիր։ Սովետական մարդիկ, համախմբված կուսակցության շուրջը, կյանքի կկոչեն համագումարի կանխագծումները, որոնք բխում են հենց իրենց շահերից։ Դրանով իսկ նրանք նոր էջեր կգրեն կոմունիստական շինարարության տարեգրության մեջ։

---

18 «Սովետական Հայաստան», 27. II. 1976։

19 Նույն տեղում, 3. III. 1976։